ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"30" հոկտեմբերի 2025թ. N 2994-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵԼՔԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Ազիմուտ Ավիաուղիներ» բաժնետիրական ընկերության հոկտեմբերի 9-ի և 28-ի գրությունները և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալի 2025 թվականի հոկտեմբերի 29-ի միջնորդությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի վճարումից ազատել հետևյալ ուղղությունով.

1) «Ազիմուտ Ավիաուղիներ» բաժնետիրական ընկերությանը՝

Կրասնոդար-Երևան- Կրասնոդար (KRR) 11.10.2025թ.-ից 36 ամսով:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումն Ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին ստորագրման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

10/30/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք.Երևան